չարժիչը, խաբեբայ և անստոյգ կը կոչեն զասիկայ.

Spes vaga pectora ludit.

Պատրանք սրտից՝ Ցոյս յեղյեղուկ։

Գոլլինս անգղիացին՝ փափուկ նայուածքով, դիւթիչ ժպիտով և խարտեաշ մազերով Աստուած մը կ'ենթադրէ ըզՑոյս ։

ԱՐԿԱԾՔ

Ի խորտակման նաւու միոյ[1].

Ամպք դիզացեալ էին, և ծովն առհասարակ փոխեալ էր 'ի փրփուր եռացեալ, և հրաշէնք[2] ամենակալին որոտալով որոտային, և երկիր սասանէր։ Ի հարկանել նաւուն ընդ յատակ՝ անդէն և անդ խորտակեալ փշրէր որպէս ունդ յարդի հոսեալ հեծանոցաւ։ Այլ յառաջ քան զայն նաւապետն վազվազէր 'ի խելս նաւուն, բարձեալ երկուս ինչ փոքունս, մէն 'ի միում բազկի. — զմանկիկն իւր և զդստրիկն փոքրիկ։ Երկայն էին վարսք նոցա և ծածանէին զերեսօք նոցա. և մինչ այն ինչ պրծեալ զնա համարէաք՝ գթեալ անկաւ. այլ պնդապինդ ունէր զնոսա 'ի գրկին։ Իսկ ամբոխ նաւորդացն. — աւաղ թշուառականացն. — կոհակք հարեալ կորզեցին զնոսա. կէսք ջախջախեցան, կէսք կոյր եղեն փրփրացեալ ալեացն, այլք անկան դիտապաստ. շունչն ցանկալի ելիք սարտեաւ 'ի նոցանէ. ոչ ոք 'ի խորտակեալ բեկորոյ անտի՝ յորոյ վերայ կառուցեալն կայր՝ ոստեաւ 'ի տախտակամած անդր, բուռն հարկանել զձեռաց որ կարկառէին հասանել 'ի նոսա. այլ յորսայսեալք անկանէին և կային միայն մեծաբաց աչօք։ Իսկ նաւապետն կառուցեալ կայր միայնակ կենդանի։ Աղերսէին նմա և ասէին. Նաւապետ, եթէ սիրես զԱստուած, ընկեա այսր զողայքդ։ Եւ նա ընկէց զմին, զդեռաբողբոջ մանկիկն երկամեայ. բայց ալիք ծովուն կորզեցին զնա 'ի լպրծուն դարափանցն և ընկլուզին 'ի խորս. տեսին զնա, լուան զձայն զճիչ աղաղակի նորա։ Ցայնժամ եւ կանգնեցաւ, ամբարձ զողայն զմիւս. և ամենայն ամբոխ ժողովրդեան մերոյ կարկառեալ զգորովալիր բազուկսն[1]՝ աղաղակէր. Ընկեա այսր, ընկեա այսր. և նա արար այնպէս. պարզեաց զաջ իւր 'ի կուրծս կոյս գեղջ երիցուն. և 'ի նմին պահու ալիք մեծակուտակ զեղաւ 'ի վերայ նոցա։ Եւ որք տեսինն զայն 'ի ծովեզերէն՝ ասէին, եթէ ընկլուզին ալիք զնըշխար նաւուն և մանր խորտակեցին, որպէս կին զի արկեալ զձեռսն 'ի հայս՝ մանրեալ փշրեսցէ զշառաչիդ աղի 'ի վերայ ուռուցելոյ հացին։ Զգեալ հանաք զմարդիկն մեր. երկուք 'ի նոցանէ մեռեալք էին, կոծեալք 'ի ծովէն, և գըլուխք նոցա անկեալ կախեալ կային։ Բազուկք գեղջ երիցուն մերոյ թափուրք էին. քանզի ալիք կորզեցին ըզգեղեցիկն, զգեղեցիկ զաւնիկն։ Բազում անգամ տեսանեմք արդ զերէցն մեր կանգուն առ երի տապանի աղջկանն փոքրկան. բայց նա անպարտ է 'ի վնասուէն, անպարտ է 'ի վնասուէն։

ԻՆՃԵԼՈՒ Անգղիացի։

ԿԱԼԿԱԴԱ

Բարեկամ Հնդկաստանի ըսուած անգղիական օրագիրը հետևեալ տեղեկութիւնները կու տայ Կալկադայի վըրայօք ։

« Գիտնալու է որ Կալկադա Լոնտրայի նման քաղաք մ'է, կեդրոն վաճառականութեան, և գետին ափանցը վրայ երկու կողմէն արուարձաններ ունի. Կալկադա իրեք մեծ մաս կը բաժ-

1 Grace նաւ Սուտէրլէնտայ :

2 Շանթք կայծականց :

1 Հեղինակն՝ քաղցեալ բազուկս ասէ :